Հաստատում եմ՝

ՀՀ Սյունիքի մարզի «Մեղրու թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ _____ Ռ. Գևորգյան

(ստորագրություն)

«_03_» _____09_____ 2023թ.

(ամիս, ամսաթիվ)

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

2023 - 2024

ուսումնական տարի

Դասվար՝ Հասմիկ Հայրապետյան

Դասարան՝ I

Դասարանի ղեկավարը, տարրական դպրոցում՝ դասվարը՝

1) դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում, հայտնաբերում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի (ընտանիքի) և դրա մասին մեկօրյա ժամկետում տեղեկացնում է դպրոցի տնօրենին՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ.

2) մասնակցում է իր ղեկավարած դասարանում սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դիտարկմանը, բացահայտմանը, գնահատմանը և մանկավարժահոգեբանական աջակցության համապատասխան ծառայությունների մշակմանը, դրանց ապահովմանը.

3) նպաստում է սովորողների նկատմամբ դպրոցի և ընտանիքի միասնական մանկավարժական պահանջների կատարման ապահովմանը.

4) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն.

5) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, էլեկտրոնային գրանցումները, դպրոցի տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն.

6) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ.

7) դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողին խրախուսանքի ներկայացնելու հարցը:

ԴԱՍԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ի դասարանում սովորում են 22 սովորող 11 տղա և 11 աղջիկ: Սովորողները ակտիվ են, շարժուն, կարգապահ և հետաքրքրասեր: Պատրաստակամ են կատարելու ուսումնական առաջադրանքները, դրսևորում են ուշադրություն, հետաքրքրասիրություն, կենտրոնանում են ուսումնական գործունեության շուրջ: Ազնիվ են, բարեսիրտ, ընկերասեր, ուշադիր և հոգատար միմյանց նկատմամբ: Շնորհալի և ստեղծագործող աշակերտներ են: Լսում, ընկալում են ուսուցչի խոսքը:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հ/հ	*Ազգանունը, անունը, հայրանունը*	*Դպրոց ընդ. տարեթիվը*	*Ծննդյան թիվը*	*Հասցեն*
1	Առաքելյան Լիլիա Գուրգենի	2023	28.04.2017թ.	Զ. Անդրանիկի փողոց, շ. 32, բն. 40
2	Առաքելյան Լևոն Մուշեղի	2023	11.12.2016թ.	Այգեստան փողոց, տուն 5
3	Բաղդասարյան Էլեն Սմբատի	2023	19.04.2017թ.	Փարամազի փողոց, շ. 17, բն. 17
4	Բարսամյան Միլանա Կարենի	2023	01.11.2017թ.	Արաքսաշեն թաղամաս, շ. 1, բն. 9
5	Բարսամյան Միլենա Կարենի	2023	01.11.2017թ.	Արաքսաշեն թաղամաս, շ. 1, բն. 9
6	Բեգլարյան Աննա Կարենի	2023	16.10.2017թ.	Արաքսաշեն թաղամաս, շ. 1, բն. 1
7	Գինոսյան Ալեն Նվերի	2023	19.09.2017թ.	Փարամազի փողոց, շ. 42, բն. 13
8	Գրիգորյան Արթուր Ժորայի	2023	16.02.2017թ.	Փարամազի փողոց, շ. 15, բն. 18
9	Թամրազյան Ռիմմա Սասունի	2023	13.11.2017թ.	Զ. Անդրանիկի փողոց, 36Ա, բն. 8
10	Խառատյան Սեմ Ավագի	2023	03.02.2017թ.	Փարամազի փողոց, շ. 15, բն. 9
11	Կարապետյան Վիկտորիա Վասիլի	2023	11.11.2017թ.	Փարամազի փողոց, շ. 42, բն. 8
12	Կոզլով Մոնթե Գարիկի	2023	25.11.2017թ.	Փարամազի փողոց, շ. 36, բն. 8
13	Կորստելովա Անգելինա Վադիմի	2023	03.10.2017թ.	Զ. Անդրանիկի փողոց, շ. 32, բն. 20
14	Հարությունյան Արսեն Նարեկի	2023	01.02.2017թ.	Փարամազի փողոց, շ. 36, բն. 11

15	Ղազարյան Անդրեյ Հարությունի	2023	15.07.2017թ.	Ադելյան փողոց, շ. 15Ա, բն. 21
16	Մանուկյան Միլենա Արթուրի	2023	28.10.2017թ.	Զ. Անդրանիկի փողոց, 36Ա, բն. 3
17	Մարտիրոսյան Արեգ Կարենի	2023	05.12.2017թ.	Փարամազի փողոց, շ. 14, բն. 19
18	Մելքոնյան Էդիտա Էդգարի	2023	28.04.2017թ.	1 բնակ. թաղամաս, տուն 5
19	Միրզոյան Տիգրան Արթուրի	2023	17.07.2017թ.	1 բնակ. թաղամաս, տուն 4
20	Մկրտչյան Մարի Արտուրի	2023	03.02.2017թ.	Զ. Անդրանիկի փողոց, շ. 26, տ. 17
21	Մկրտչյան Վահե Արթուրի	2023	24.09.2017թ.	Զ. Անդրանիկի փողոց, շ. 28, բն. 33
22	Սիմոնյան Երվանդ Խաչիկի	2023	05.06.2017թ.	Հայրենադարձների փողոց, շ. 9, բն. 1

ԾՆՈՂԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

Նախագահ՝ Բունիաթյան Փառանձեմ

անդամներ՝ Սարգսյան Մադիննա

Ռուստամյան Մանուշակ

Զաքարյան Զարե

Ալավերդյան Նարինե

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1. Աշխատանք տանել դասարանը անհրաժեշտ նյութերով կահավորելու ողղությամբ:

2. Սովորողներին տալ հայեցի դաստիարակություն, նրա մեջ արթնացնել ազգային արժանապատվություն:

3. Ամենօրյա հսկողություն սահմանել յուրաքանչյուր սովորողի նկատմամբ (հաճախում, առաջադիմություն, կարգապահություն):

4. Շաբաթը մեկ անգամ անցկացնել դասղեկի ժամ և այն ծառայեցնել սովորողի բազմակողմանի դաստիարակությանը:

5. Կիսամյակը երկու անգամ հրավիրել դասարանական ծնողական ժողով: Ծնողներին մասնակից դարձնել դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներին: Ամուր հիմքերի վրա դնել սովորող-դպրոց-ընտանիք կապը:

6. Կազմակերպել էքսկուրսիաներ:

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հոգևոր դաստիարակություն

Կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Հոգևոր դաստիարակությունը կարևոր է արժեքային համակարգի ձևավորման, մշակութային ժառանգությունը փոխանցելու, բարոյական արժեքներ սերմանելու համար:

2. Գեղագիտական դաստիարակություն

Այն պետք է ուղղել կյանքում և արվեստում գեղեցիկի վերաբերյալ պատկերացումների ձևավորմանը, շրջապատող իրականության հանդեպ գեղագիտական վերաբերմունքի, գեղագիտական գնահատականի ձևավորմանը:

3. Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Այս դաստիարակությունը ենթադրում է նպատակասլաց աշխատանք՝ուղղված հայոց բանակի նկատմամբ սիրո և հարգանքի ձևավորմանը: Սովորողները պետք է լավ հասկանան հայոց բանակի պատմական կոչումն ու առաքելությունը՝ որպես հայրենիքի անվտանգության ապահովման գլխավոր երաշխավորի:

4. Ֆիզիկական դաստիարակություն

Ֆիզիկական դաստիարակությունը կարևոր դեր է խաղում անձի համակողմանի զարգացման գործում: Ֆիզիկական զարգացումը մարդու համար ստեղծում է պայմաններ մտավոր լիարժեք աշխատանքի համար:

5. Աշխատանքային դաստիարակություն

Աշխատանքը հասարակության նյութական և հոգևոր հարստության հիմնական աղբյուրն է: Այս դաստիարակությունը օգտակար է աշակերտների քաղաքացիական հասունության, մտավոր և բարոյական ձևավորման, ինչպես նաև ֆիզիկական զարգացման համար:

6. Բնապահպանական դաստիարակություն

Մեր օրերում շատ կարևոր է այս դաստիարակությունը դպրոցում: Օգտագործելով դպրոցի ներուժը նպաստել մեր մոլորակի կայունացման նկատմամբ պատասխանատվության բարձրացմանը:

7. Դպրոց-ընտանիք կապը

Դպրոց-ընտանիք համագործակցության դեպքում է հնարավոր ձևավորել աշակերտի մեջ բարձր բարոյական որակներ, ապահովել նրանց աշխատանքային ուսուցումն ու մասնագիտական կողմնորոշումը:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսում-նական շաբաթներ	Դաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը
1-ին	Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում	սեպտեմբերի 1
2-րդ	Դասարանական կոլեկտիվի ձևավորում	սեպտեմբերի 8
3-րդ	Զրույց նվիրված «Անկախության տոն»-ին	սեպտեմբերի 15
4-րդ	ՀՀ պետական խորհրդանիշները	սեպտեմբերի 22
5-րդ	Հայրենիքը սիրել նշանակում է ...	սեպտեմբերի 29
6-րդ	Ով է հետիոտնը	հոկտեմբերի 6
7-րդ	Երեխայի իրավունքները	հոկտեմբերի 13
8-րդ	Ո՞րն է ամենակարևորը	նոյեմբերի 3
9-րդ	Մեր հավատարիմ բարեկամը՝ լուսացույց	նոյեմբերի 10
10-րդ	Կոնֆլիկտների հաղթահարում	նոյեմբերի 17
11-րդ	Շնորհակալություն, ներողություն, խնդրեմ	նոյեմբերի 24
12-րդ	Մենք ծանոթանում ենք ճանապարհային նշաններին	դեկտեմբերի 1
13-րդ	Զրույց նվիրված երկրաշարժի զոհերի հիշատակի օրվան	դեկտեմբերի 8
14-րդ	Մենք ուղևորներ ենք	դեկտեմբերի 15
15-րդ	Առողջ ապրելակերպի վարքագծի ձևավորում	դեկտեմբերի 22
16-րդ	Զրույց նվիրված «Բանակի օրվան»	հունվարի 26
17-րդ	Եթե հայ ես, ուրեմն՝ զինվոր ես	փետրվարի 2
18-րդ	Որտեղ կարելի է խաղալ	փետրվարի 9
19-րդ	Օրվա ռեժիմը և առողջությունը	փետրվարի 16
20-րդ	Անաղարտ պահենք մայրենին	փետրվարի

		23
21-րդ	Սովորում ենք պահպանել երթևեկության կանոնները	մարտի 1
22-րդ	Ինչպե՞ս և ի՞նչ նվիրել	մարտի 15
23-րդ	Զրույց գեղեցկության վերաբերյալ	ապրիլի 5
24-րդ	Քանի լեզու գիտես այնքան մարդ ես	ապրիլի 12
25-րդ	Ով է իսկական ընկերը	ապրիլի 19
26-րդ	Օրը սկսենք բարի լուրով	ապրիլի 26
27-րդ	Սիրելի գրքի էջերով	մայիսի 3
28-րդ	Զրույց նվիրված «Հաղթանակի և խաղաղության տոնին»	մայիսի 10
29-րդ	Մեր փողոցներում	մայիսի 17
30-րդ	Իմ ձեռքբերումները այս ուսումնական տարում	մայիսի 24

Դասարանի ղեկավարի ընդհանուր բնութագիրը

1. Դասարանի ղեկավարը բարեկրթության չափանիշ է հանդիսանում նրբանկատությունը, ի հակադրություն կոպտության, աննրբանկատության:
2. Դասարանի ղեկավարը պետք է լինի խիստ, բայց բարի և անաչառ:
3. Եթե դասարանի ղեկավարը ուզում է, որ իրեն հարգեն, առաջին հերթին ինքը պետք է հարգի ուրիշների արժանապատվությունը:
4. Նախքան ուրիշներից ուշադրություն պահանջելը, դասարանի ղեկավարը ինքը պետք է ուշադիր լինի իրեն շրջապատողների հանդեպ, հասկանա նրանց շահերը, կարիքներն ու պահանջները:

Պետք է ունենա

1. Ներքին ազատություն
2. Մտածելակերպի, վարքի ազատ ընտրություն
3. Սեփական արարքների հնարավոր հետևանքների համար լիարժեք պատասխանատվության գիտակցում

Պետք է կարողանա

1. Պլանավորել իր մասնագիտական գործունեությունը
2. Վերլուծել և կանխատեսել իր գործունեության արդյունքները
3. Աջակցել յուրաքանչյուր սովորողի՝ որպես անհատ ձևավորմանը
4. Սովորողներին սովորեցնել վերլուծել իրենց արտաուսումնական գործունեությունը
5. Կապեր հաստատել սովորողների ծնողների, առարկայական ուսուցիչների և հասարակության հետ

Ինչն է ամենակարևորը դասարանի ղեկավարի համար՝ երեխաների հետ շփման մեջ

- Բարությունը (իհարկե բարությունն առանց պահանջկոտության՝ թակարդ է մանկավարժի համար, բայց պարզվում է, որ երեխաների համար դա դասղեկի ամենակարևոր հատկանիշն է: Գուցե երեխաները հոգնե՞լ են անդադար վերահսկումից և պահանջներից, և նրանց պետք են պարզ մարդկային զգացումներ),
- ուշադրությունը,

- հոգատարությունը
- իրենց հասկանալը,
- կարեկից, արձագանքող վերաբերմունքը,
- շփման համար բաց լինելը,
- բարեհամբույր լինելը,
- պատասխանատվությունը,
- մարդասիրությունը,
- անկեղծությունը,
- հումորի զգացումը,
- լրջությունը,
- հավասարակշռվածությունը,
- արդարամտությունը,
- նպատակասլացությունը,
- ժամանակակից լինելը:

Ինչն է ամենակարևորը դասարանի ղեկավարի համար՝ ծնողների հետ շփման մեջ

- ազնվությունն ու արդարամտությունը
- համբերատար լնելը
- հանգստությունը
- բարեկրթությունը
- նրբանկատությունը

Դասարանի ղեկավար լինել՝ նշանակում է.

- մեծ պատասխանատվություն կրել,
- կարողանալ լսել և հասկանալ,
- հոգ տանել դասարանի յուրաքանչյուր աշակերտի մասին՝ նրա հոգեկան, ֆիզիկական և բարոյական վիճակի մասին,
- աջակցել (ուսման, դասարանի, ծնողների և շրջակա սոցիումի հետ շփման մեջ, ինքնաբացահայտման և ինքնազարգացման մեջ),
- ղեկավարել և կարգուկանոն պահպանել,

- փոխարինել ծնողներին, ավագ ընկերոջը (եթե դրա կարքը կա),
- արդարամիտ լինել:

Խորհուրդներ դասարանի ղեկավարին

- Հիշեք, որ յուրաքանչյուր երեխա իր հետաքրքրությունները, ուրախություններն ու տխրությունները՝ իր ներաշխարհն ունի, կպչուն մի եղեք:
- Քանի դեռ ճշմարտությունը չեք պարզել, հանգստություն պահպանեք:
- Մտեք երեխայի դրության մեջ, փորձեք հասկանալ, թե ինչ է նա զգում, հետո նոր միայն որոշեք՝ ինչ անել:
- Լավ ու բարի արարքներ գործեք, նրանք մեզանից են սովորում:
- Այնպես արեք որ երեխայի համար հաճելի լինի ձեզ հետ շփվելը. գովեք, ընդգծեք հաջողությունները, ոգեշնչեք նրան:
- Ավելի շատ ինքնուրույնություն և ընտրելու իրավունք տվեք:
- Ուշադիր եղեք: Չափավորեք ձեր սպասելիքները, մի մոռացեք, որ նրանք այնուամենայնիվ դեռ երեխա են:
- Խուսափեք մեղադրելուց:
- Մի° մեծամտացեք: Ընդունեք, որ դուք էլ ինչ-որ բան չգիտեք:
- Մի° սահմանափակեք ձեր երևակայությունը, մի° վախեցեք անսովոր երևալուց:

Մի° համեմատվեք այլ ուսուցիչների հետ: Փոխարենը համեմատեք ինքներդ ձեզ՝ երեկ և այսօր: